Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 342 - Ա որոշման

«Շաքարային դիաբետի կանխարգելումն ու խնամքը տարեցների շրջանում»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Կանխարգելել շաքարային դիաբետը և շաքարային դիաբետի բարդությունները՝ տարեցների շրջանում Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի ընդհանուր առմամբ 48 քաղաքային և գյուղական համայնքներում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Դիաբետի համաշխարհային հիմնադրամ և Դանիական Կարմիր խաչ
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզեր, սոցիալ-առողջապահական ոլորտ
6.	Ծրագրի բյուջեն	106 000 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի ազգաբնակչություն և 2-րդ տիպի շաքարային դիաբետ ունեցող տարեցներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	02.04.2021 – 01.07.2022 թթ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Շաքարային դիաբետ ունեցող մարդկանց ինքնահսկողության հմտությունների զարգացում, որը ներառում է դասընթացներ կամավորների, բուժքույրերի և բժիշկների համար, ինքնօգնության խմբերի ձևավորում և պարբերական հանդիպումների կազմակերպում, առողջ ապրելակերպի խթանում: /բյուջե 52 000 000 դրամ, ժամանակահատված՝ 02.04.2021 – 01.07.2022 թթ. /:

		2. Ռիսկային ու խոցելի խմբերի տարեցներին առողջ ծերացման, առողջ ապրելակերպի և շաքարային դիաբետի վերաբերյալ կրթում /բյուջե 25 000 000 դրամ, ժամանակահատված՝ 02.04.2021 – 01.07.2022 թթ. /: 3. Շաքարային դիաբետ ունեցող տարեցների ինքնահսկողության հմտությունների բարելավմանն ուղղված նորարական լուծումներ, շահերի պաշտպանության կարողությունների զարգացում: /բյուջե 8 000 000, ժամանակահատված՝ 02.04.2021 – 01.07.2022 թթ. /: 4. Կազմակերպական ծախսեր /բյուջե 21 000 000 դրամ, ժամանակահատված՝ 02.04.2021 – 01.07.2022 թթ. /:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Գլյուկոմետրի ասեղների և ստրիպերի ձեռքբերում ինքնօգնության խմբերի համար՝ 7 500 000 դրամ արժողությամբ: 2. Գրենական պիտույքների ձեռքբերում ինքօգնության և առողջ ապրելակերպի խմբերի անդամների, նրանց ընտանիքների անդամների, դասընթացների մասնակիցների համար՝ 6 000 000 դրամ արժողությամբ: 3. Տեղեկատվական նյութերի՝ բրոշյուրների, բուկլետների, ձեռնարկների տպագրություն՝ 14 000 000 դրամ արժողությամբ: 4. Հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում դասընթացներ կազմակերպելու համար՝ 6 500 000 դրամ արժողությամբ: 5. Վառելիքի ձեռքբերում՝ 3 000 000 դրամ արժողությամբ: 6. Մննդի ձեռքբերում ծրագրի շրջանակներում ինքնօգնության խմբերի, խոհարարական խմբակների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպվող հանդիպումների, դասընթացների ընթացքում հյուրասիրություն կազմակերպելու նպատակով՝ 15 500 000 դրամ արժողությամբ: 7. Գլյուկոմետրերի և տոնոմետրերի ձեռքբերում 2 000 000 դրամ արժողությամբ 8. Սպորտային պարագաների ձեռքբերում ինքնօգնության և առողջ ապրելակերպի խմբերի համար՝ 8 000 000 դրամ արժողությամբ

		9. Թվային թևնոցների ձեռքբերում ինքնօգնության խմբերի անդամների համար՝ 1 500 000 դրամ արժողությամբ 10. Ծրագրում ընդգրկված կամավորների հեռախոսների լիցքավորում 3 000 000 դրամ արժողությամբ 11. Կամավորների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ 2 000 000 դրամ արժողությամբ 12. Դասընթացավարների ծառայության մատուցում՝ 2 000 000 դրամ արժողությամբ 13. Ձեռնարկների թարգմանության ծառայության ձեռքբերում՝ 2 000 000 դրամ արժողությամբ 14. Շաքարային դիաբետ ունեցող մարդկանց ինքնահսկողության կարողությունները բարելավելու ուղղությամբ նորարարական լուծումների վերաբերյալ դասընթացների և փորձի փոխանակման հանդիպումների /դասընթացավար, հյուրանոցային ծառայություն, հյուրասիրություն/ կազմակերպում՝ 8 000 000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական ծախսեր՝ 21 000 000 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ 20 000 000 արժողությամբ և գործուղումները (օրապահիկ և հյուրանոցային ծառայություն)՝ 1 000 000 դրամ արժողությամբ՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում, տեղական ինքնակառավարման մարմինների, պոլիկլինիկաների և ամբուլատորիաների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին և Դիաբետի համաշխարհային հիմնադրամին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Նաև ՀՀ Կառավարության 2003 թ.

		հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

23.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ